# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի համայնքապետարան 2018թ-ի հունվարի 1-ից մինչև 2018թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

2018թ-ի տարեսկզբին Փշատավանի գյուղապետարանը կազմել է գյուղապետարանի 2018թ-ի բյուջեի նախագիծը և ներկայացրել է ավագանու քննարկմանը, որը հաստատվել է ավագանու կողմից, որով և առաջնորդվում է:

2018թ-ի բյուջեն կազմում է 60341.0 հազար դրամ:

Ներկայումս նախկին տարիների և ընթացիկ տարվա աշխատավարձի ու սոց վճարների, պարտքեր չունենք:

2018թ-ի տարեվերջի դրությամբ համայնքի բյուջե է մուտքագրվել 55007.6.0 հազար դրամ այդ թվում՝

1. հողի հարկ 4554.1 հազար դրամ 86.1 %
2. գույքահարկ 3959.3 հազար դրամ 56 %
3. վարձակալական հողի հարկ 131.6 հազար դրամ 100%
4. դոտացիա 43055.1 հազար դրամ 100%
5. Այլ մուտքեր 3307.5 հազար դրամ 68.6%

2018թ-ի ընթացքում ծախսվել է 54922.8 հազար դրամ այդ թվում՝

1. Աշխատավարձ 20038.8 հազար դրամ
2. Սոցիալական ծախսեր 2165.0 հազար դրամ
3. Ապրանքներ և նյութեր ֆոնդ բյուջեյից 3065.0
4. Այլ ծառայություններ 29654.0 հազար դրամ

2018 թ-ի տարեվերջին բյուջեի ընթացիկ հաշիվներում ունենք 1946.1 հազար ՀՀ դրամ գումար:

2018 թվականի ընթացքում գյուղապետարանը անցկացրել է 6 ավագանու նիստ 38 որոշումով, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 121 որոշում և 17կարգադրություն, մուտքագրվել է 200 գրություն, ելք է արվել 209 գրություն:

2018թ-ի ընթացքում կատարվել է ներքոհիշյալ աշխատանքները՝

1. Գարնան ամիսներին կատարվել են ծառատունկ և կանաչապատման աշխատանքներ:
2. Փշատավանի գյուղապետարանը մաքուր Հայաստան ծրագրի շրջանակներում կազմակերպել է աղբահանման և ճանապարհների բարեկարգման ավազապատման աշխատանքներ:
3. 2018թ-ի գարնանային զորակոչի և զորահավաքի ժամանակ Փշատավան համայնքի կաղմից աջակցություն է ցուցաբերվել զորակոչի տարիքի բոլոր զինակոչիկներին Արմավիրի Զին-կոմիսարիատ ներկայացնելու համար:
4. Պարբերաբար, գյուղապետարանի կողմից, օգնություն է ցուցաբերվել համայնքի այն բնակիչներին, որոնց մոտ խնդիրներ են առաջացել փաստաթղթերի ձևակերպման և նոր փաստաթղթերի ձեռք բերման համար:

Հրատապ խնդիր է նաև համարվում մշակույթի տան վերանորոգումը, մանկապարտեզի կառուցումը, ինչպես նաև Փշատավան Արգավանդ ավտոճանապարհի ասֆալտապատումը :

Փշատավան համայնքի
ղեկավար՝ / Ա.Քյարամյան/